ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՏԺԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԵՎ ՀՀ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Դավիթ Զիլֆիմյան
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2015-2016 ուստարվա մագիստրատուրայի շրջանավարտ

Հանցավոր արարքն առաջ է բերում դրանում մեղավորի քրեական պատասխանատվությունը: Քրեական պատասխանատվության ձևերից է պատիժը, որը հանցագործության իրավաբանական հետևանքն է և քրեական պատասխանատվության տրամաբանական ավարտը: Առանց պատժի և նրա հարակից ինստիտուտների, որոնց միջոցով որոշվում են պատժի չափն ու կատարումը, քրեական իրավունքը գոյություն ունենալ չի կարող: Քրեական իրավունքի «հանցագործություն» և «պատիժ» հասկացությունների դիալեկտիկական կապը դրսևորվում է իտալացի հոգեբույժ Չեզարե Լոմբրոզոյի «կա հանցագործություն, կա պատիժ, չկա հանցագործություն, չկա պատիժ» կարևորագույն դրույթում[1]: ՀՀ նախկին քրեական օրենսգրքում պատժի հասկացությունը սահմանված չէր, իսկ ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 48-ի համաձայն՝ պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից՝ օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել հանցանք կատարած անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Այս առումով կարելի է ասել, որ պատժի նպատակների միջոցով իրականացվում են և՛ սահմանադրությամբ, և՛ քրեական օրենսդրությամբ ամրագրված օրինականության, արդարության, մարդասիրության և այլ սկզբունքներ: Մասնավորապես, ՀՀ քրեական իրավունքի արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից է բխում սոցիալական արդարությունը վերականգնելու նպատակը: Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի, համապատասխանեն հանցանքի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն պատժի նպատակների իրականացման համար:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագիծի (այսուհետ՝ նախագիծ) 57-րդ հոդվածի առաջին մասը պատժի հասկացությունը շարադրում է գրեթե նույնությամբ, բայց նպատակների հարցում ցուցաբերվում է այլ մոտեցում: Այսպես, Նախագծի հոդված 57-ի երկրորդ մասը սահմանում է պատժի նպատակները՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին, ձևա-

[1] ՀՀ քրեական իրավունք. ընդհանուր մաս: Դասագիրք բուհերի համար: ԵՊՀ հրատ., Երևան, 2012 էջ 368:

վորել նրա իրավահպատակ վարքագիծը և կանխել հանցագործությունները: Նախագծով սահմանված պատժի նպատակների թվում առանձնանում է պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման նպատակը, որը քրեակատարողական իրավունքի գիտության մեջ սահմանվում է որպես հոգեբանամանկավարժական, տնտեսական, բժշկական, իրավաբանական և կազմակերպական միջոցների բարդ համալիր կազմող երկարատև գործընթաց: Այն ուղղված է յուրաքանչյուր դատապարտյալի մոտ ձևավորելու պատժի կրումից հետո հասարակական կյանքում ընդգրկվելու համար անհրաժեշտ ընդունակություններ, հմտություններ և պատրաստակամություն: Բայց միաժամանակ դատապարտյալի վերասոցիալականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ են նաև պատժի կրման պայմաններին վերաբերող որոշակի պահանջներ: Դրանք պետք է լինեն բավարար, որպեսզի պատժի կրման ընթացքում դատապարտյալը չկորցնի հասարակությունում նախկինում ձեռք բերած վարքի կանոնները և հմտությունները[1]:

Վերասոցիալականացման գործընթացի բովանդակության գիտական բացահայտման համար կարևորվում է դրա խնդիրների սահմանումը, որոնցից են՝

1. Դատապարտյալների կրթական մակարդակի բարձրացումը,
2. Մասնագիտական կրթությունը կամ արտադրական որակավորման բարձրացումը,
3. Առողջության պաշտպանությունը, վերաբերմունքը քրեակատարողական հիմնարկում սահմանված կարգին և պայմաններին,
4. Իրավախախտների միջավայրին հատուկ սոցիալ-հոգեբանական բացասական երևույթների չեզոքացումը,
5. Դատապարտյալների անհրաժեշտ սոցիալական կապերի պահպանման և զարգացման հնարավորությունների ընդլայնումը,
6. Հասարակությունում ընդուված կյանքի համար համատեղելի պայմանները դատապարտյալների համար,
7. Սեփական անձը և շրջապատողներին հարգելու ունակության ձևավորում ազատազրկման բացասական երևույթները նվազեցնելու միջոցով:

Թվարկվածը խնդիրների շարքն իրականում ավելի ընդարձակ է: Այստեղ կարելի է ընդգրկել նաև հասարակության անդամներին ներկայացվող պահանջների իմացությունը, չձևավորված ընդունակությունների բացահայտումը, իրավահպատակ վարքագծի նախապատրաստումը, հոգեբանական և սոցիալական օգնության ցուցաբերումը և այլն[2]:

ՀՀ նոր քրեակատարողական օրենսգրքի նախագիծը սահմանում է «դատապարտյալի վերասոցիալականացումը և դրա հիմնական միջոցները» վերտառությամբ նորմ, համաձայն որի՝ դատապարտյալի վերասոցիալականացումը մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալների հարգալից վերաբերմունքի ձևավորումն է, ինչպես նաև իրավահպատակ վարքագծի խթանումը՝ դատապարտյալի մոտ առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով: ՀՀ նոր քրեակատարողական օրենսգրքի նախագիծը սահմանում է նաև դատապարտյալի վերասոցիալականացման հիմնական միջոցները՝ պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները, դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավա-

[1] Տե՛ս Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները ՀՀ 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում, Երևան 2016, էջ 69:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 70:

կան աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը:

Վերասոցիալականացման միջոցները կիրառվում են՝ հաշվի առնելով պատժի տեսակը, կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, դատապարտյալի անձը և նրա վարքագիծը պատժի կրման ընթացքում, դատապարտյալի վերաբերմունքն իր կատարած հանցագործությանը, պատժի ժամկետը, ինչպես նաև պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու սկզբունքով պայմանավորված այլ հանգամանքներ

ՀՀ գործող քրեական օրենսգրքով [1] և նախագծով նախատեսված պատժի նպատակներն ամբողջությամբ վերաբերում են և՛ չափահաս, և՛ անչափահաս դատապարտյալներին: Նախագիծը, պատժի ընդհանուր նպատակներից բացի, հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նպատակ է սահմանում նրա ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական բնականոն զարգացման ապահովումը, նրա դաստիարակումը և պաշտպանումը այլ անձի բացասական ազդեցությունից: Նախագծով անչափահասների համար նախատեսված վերը նշված նպատակը որոշակի իմաստով ընդհանուր եզրեր ունի պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման նպատակի հետ:

ՀՀ ՔՕ-ն նախատեսում է անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները վերնագրով առանձին բաժին և համանուն գլուխ (բաժին 5, գլուխ 14): Ընդհանուր առմամբ այդ առանձնահատկությունները վերաբերում են քրեական օրենսգրքի հետևյալ դրույթներին՝ քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատում և դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառում, անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակները և այդ պատիժների նշանակումը՝ հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները, անչափահասների կողմից պատիժը կրելուց վաղաժամկետ ազատում, վաղեմության ժամկետներ և դատվածության մարման ժամկետներ:

Հանցանք կատարած անչափահասների պատասխանատվության առանձնահատկությունն է այն, որ նրանց նկատմամբ կարող են կիրառվել ոչ միայն պատիժներ, այլ նաև դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: Պատժի հասկացության և անչափահասների նկատմամբ ինչպես պատիժ, այնպես էլ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հնարավորության նոր բովանդակությունը լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի Ասամբլեայի կողմից 1985թ. նոյեմբերի 29-ին ընդունված անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ նվազագույն ստանդարտ կանոններին («Պեկինյան կանոններ»): Համաձայն վերը նշված միջազգային ակտի 17-րդ հոդվածի՝ անչափահասների գործերով դատական որոշում կայացնելիս և ներգործության միջոց ընտրելիս իրավասու մարմինը պետք է ղեկավարվի հետևյալ սկզբունքներով՝ ներգործության միջոցները միշտ պետք է համարժեք լինեն ոչ միայն իրավախախտման հանգամանքներին և ծանրությանը, այլ նաև անչափահասի դրությանը և պահանջներին, ինչպես նաև հասարակության պահանջներին: Անչափահասները չեն ենթարկվում մարմնական պատիժների: Անչափահասի կատարած ոչ մի հանցագործության համար մահապատիժ չի նշանակվում: Անչափահասի անձնական

[1] Այսուհետ՝ ՀՀ ՔՕ:

ազատության սահմանափակման մասին որոշումները պետք է ընդունվեն միայն հարցի մանրազնին քննարկումից հետո, և սահմանափակումը հնարավորության սահմաններում պետք է հասցնել նվազագույնի: Անչափահաս իրավախախտին պետք չէ ազատազրկել, եթե նա մեղավոր չի ճանաչվել այլ անձի դեմ բռնությամբ լուրջ արարք գործելու կամ բազմաթիվ լուրջ իրավախախտումներ կատարելու մեջ: Անչափահասի գործի քննության ժամանակ նրա բարօրության հարցը պետք է որոշիչ գործոն լինի[1]: Այսպիսով, անչափահաս իրավախախտների նկատմամբ կիրառվող ցանկացած ներգործության միջոց ընտրելիս պետք է հաշվի առնվեն նրա անձնական առանձնահատկություններն ու գործի հանգամանքները:

Անչափահասների նկատմամբ կիրառվող պետական հարկադրանքի միջոցների առանձնահատկությունները այն են, որ օրենքով նախատեսված պատժատեսակներից նրանց նկատմամբ կարող են կիրառվել ոչ բոլորը, այլ հիմնականում ազատությունից զրկելու հետ չկապվածները: Անչափահաս իրավախախտների նկատմամբ կիրառվող պատժի բոլոր տեսակներից առավելություն ունեն գույքային սանկցիաներին վերաբերող պատիժները:

ՀՀ ՔՕ-ի 86-րդ հոդվածը սպառիչ թվարկում է անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակները՝ տուգանքը, հանրային աշխատանքները, կալանքը և որոշակի ժամկետով ազատազրկումը:

Նախագիծը նորովի է շարադրել անչափահասներին վերաբերող բաժինը. «Անչափահասների և քսանմեկ տարին չլրացած անձանց քրեական պատասխանատվության առանձնահատկությունները» (բաժին 5): Նախագիծը այս բաժնում սահմանել է առանձին գլուխ՝ «Անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի նպատակները և տեսակները» (գլուխ 15):

Նախագծի 101-րդ հոդվածը, ՀՀ ՔՕ-ով նախատեսված անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակներից զատ, նախատեսում է նաև որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը և ազատության սահմանափակում պատժատեսակները: Բացի դրանից, կալանք պատժատեսակը նախագծով վերանվանվել է կարճաժամկետ ազատազրկում:

Անչափահասի նկատմամբ այս կամ այն պատժատեսակի նշանակումը կախված է բազմաթիվ հանգամանքներից, որոնք օրենքով սահմանված կարգով ենթակա են պարտադիր ապացուցման: Անչափահասի հոգեվիճակը, տարիքային առանձնահատկությունները, բարձր էմոցիոնալ դյուրագրգռությունը, որը վերածվում է տաքարյունության, էներգիայի ավելցուկը և դրա ոչ ճիշտ օգտագործումը դատարանի կողմից պետք է հաշվի առնվեն պատժի անհատականացման ժամանակ:

Անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս, բացի պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից, հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, անձին վերաբերվող այլ առանձնահատկություններ, ինչպես նաև չափահաս անձանց ազդեցությունը նրա վրա: ՀՀ ՔՕ-ի 90-րդ հոդվածը նախատեսում է անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու կարգը: Այս հոդվածում ասվում է, որ անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը:

---

[1] Сборник международных стандартов и норм ООН в области правосудия в отношении несовершеннолетних, М., 1998г., էջ 215.

Այժմ փորձենք ներկայացնել նախագծով անչափահասների համար նախատեսված պատիժներին վերաբերող որոշակի առանձնահատկություններ:

Մարդասիրության սկզբունքից ելնելով՝ նախագծը սահմանում է, որ անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի առավելագույն և նվազագույն ժամկետը կամ չափը կրճատվում է մեկ երկրորդով: Եթե նշված կանոնը կիրառելիս պատժի ժամկետը կամ չափը պակաս է ստացվում տվյալ պատժատեսկի համար նախատեսված նվազագույն ժամկետից կամ չափից, ապա նշանակվում է ստացված ժամկետով կամ չափով պատիժ:

Անչափահասի նկատմամբ նշանակվող հանրային աշխատանքների տևողությունը, ըստ նախագծի, դատավճիռ կայացնելու պահին տասնհինգ տարին լրացած անչափահասների համար չի կարող գերազանցել օրական երկու, իսկ տասնվեցից տասնութ տարին չլրացած անչափահասների համար՝ երեք ժամը:

Գործող ՀՀ ՔՕ-ն այս հարցում սահմանում է այլ մոտեցում. հանրային աշխատանքներն անչափահասի նկատմամբ կարող է կիրառվել 16 տարին լրանալուց հետո միայն, և պատժի այս տեսակի համար օրական առավելագույն ժամեր չեն նախատեսվում: Ինչպես ՀՀ ՔՕ-ով, այնպես էլ նախագծով հանրային աշխատանքներից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում այն փոխարինվում է կարճաժամկետ ազատազրկմամբ կամ ազատազրկմամբ, բայց սահմանվում է ժամկետները հաշվելու այլ կարգ՝ հանրային աշխատանքների 24 ժամը հաշվարկվում է կարճաժամկետ ազատազրկման կամ ազատազրկման մեկ օրվա դիմաց: Նախագիծը սահմանում է նաև, որ հանրային աշխատանքները կարճաժամկետ ազատազրկմամբ կամ ազատազրկմամբ փոխարինելիս կարճաժամկետ ազատազրկման կամ ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակների համար նախատեսված առավելագույն ժամկետը, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է: Եթե հաշվարկի հետևանքով կարճաժամկետ ազատազրկման կամ ազատազրկման ժամկետը պակաս է ստացվում այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ապա պատիժը նշանակվում է հաշվարկի հետևանքով ստացված ժամկետի չափով:

Նախագծով կարճաժամկետ ազատազրկումը (ՀՀ ՔՕ-ով՝ կալանքը) անչափահասի նկատմամբ նշանակվում է միայն այն դեպքում, երբ ավելի մեղմ պատժատեսակը չի կարող նպաստել պատժի նպատակների իրականացմանը: Ոչ մեծ ծանրության հանցագործության համար, ինչպես նաև առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում, որը միջին ծանրության հանցանք է, անչափահասի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկում չի նշանակվում:

Անչափահասի նկատմամբ ազատազրկում նշանակելը պատժի բացառիկ միջոց է, որը նշանակվում է միայն այն դեպքում, երբ ոչ մի այլ միջոց չի կարող ապահովել պատժի նպատակների իրականացումը: Ի դեպ՝ ոչ մեծ ծանրության հանցագործության համար, ինչպես նաև առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում, որը միջին ծանրության հանցանք է, անչափահասի նկատմամբ ազատազրկում չի նշանակվում: Եթե անչափահասը առաջին անգամ է հանցանք կատարում, ապա ոչ մեծ և միջին ծանրության հանցանքի համար ազատազրկում չի նշանակվում: Ելնելով անչափահասների տարիքային առանձնահատկություններից և այն հանգամանքից, որ ազատազրկումը ինքնին ծանր պատժատեսակ է, նախագծը ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար անչափահասների նկատմամբ ազա-

տազրկում չի նախատեսում:

Դրական պետք է գնահատել այն հանգամանքը, որ ՀՀ ՔՕ-ն և նախագծը նույնպես ցմահ ազատազրկում չեն նախատեսում հանցանքը կատարելու պահին 18 տարին չլրացած անձանց, ինչպես նաև հանցանքի կատարման կամ դատավճռի կայացման պահին հղի կնոջ նկատմամբ:

Եզրափակելով փորձենք ներկայացնել հանցավորության, ինչու՞ չէ՝ նաև անչափահասների հանցավորության նկատմամբ քրեական պատիժների ազդեցությունը: Հանցավորության դեմ պայքարի միջոցների համակարգում պատժի դերը վստահորեն կարելի է համարել ոչ հիմնական, քանի որ հանցավորության աճի միտումը կախված է այլ երևույթներից՝ առավել հզոր, քան պատժի հնարավոր ազդեցությունն է՝ տնտեսական, քաղաքական, կազմակերպակառավարչական: Պետությունը, պատժելով հանցագործին, ինքը նույնպես կրում է որոշակի կորուստներ՝ կապված արդարադատության իրականացման, պատժի կատարման և այլ հանգամանքների հետ: Պատիժն այն միջոցներից մեկն է, որի օգնությամբ պետությունը, ազդելով հանցավորության վրա, պահում է այն որոշակի հարթության վրա: Պատիժը վերջին ծայրահեղ միջոցն է, որը պետք է գործի այն պարագայում, երբ հասարակությունն այլևս ի զորու չէ կանխելու հանցագործությունը: Ոչ թե պատիժների խստությունն է ահաբեկում հանցագործներին, այլ օրենքների գործնական, օպերատիվ կիրառումը և հանցագործությունների հուսալի բացահայտումը: Պետության համար առավել նպատակահարմար է և արդյունավետ կանխել հանցագործությունը, քան պատժել հանցագործին:

ЦЕЛИ И ВИДЫ НАКАЗАНИЯ, ПРЕДНАЗНАЧЕННЫЕ ДЛЯ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ СОГЛАСНО УГОЛОВНОМУ КОДЕКСУ РА И ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНОГО КОДЕКСА РА

Давид Зилфимян
Магистрант юридического факультета ЕГУ

В действующем Уголовном кодексе РА и в проекте нового уголовного кодекса РА установленные цели и виды наказания определенно отличаются друг от друга, в частности по отношению к несовершеннолетним правонарушителям. В работе представлены существующие в действующем Уголовном кодексе и в проекте нового Уголовного кодекса различия относительно уголовных наказаний. Определяются понятие, цели и система наказания, детально комментируется цель ресоциализации человека, приговоренного к наказанию, в качестве нововведения в системе целей наказания и раскрывается основная норма – ресоциализация осужденного и ее основные методы, зафиксированная в проекте нового уголовно-исполнительного кодекса РА. В проекте уголовного кодекса РА раскрывается цель наказания, предназначенная только для несовершеннолетних, - обеспечение естественного физического, психического, духовного, нравственного и социального развития несовершеннолетнего осужденного, его воспитание и зашита от негативного влияния другого лица. В проекте

нового Уголовного кодекса РА детально излагаются некоторые особенности наказаний, предусмотренных для несовершеннолетних, касающиеся общественных работ, лишения свободы и кратковременного лишения свободы. В статье представлены выводы автора об эффективности и значении уголовных наказаний.

THE OBJECTIVES AND PENALTIES FOR JUVENILES ACCORDING TO THE CRIMINAL CODE RA AND THE DRAFT OF THE NEW CRIMINAL CODE RA

Davit Zilfimyan
Master of Laws, YSU Faculty of Law

The current criminal code of the RA and the draft of the new criminal code of the RA established penalties' goals and types which are definitely different from each other, particularly in relation to juvenile offenders. The paper presents the current differences in the current criminal code and the draft of the new criminal code, regarding criminal penalties. Defines the concept, objectives and system of penalties, commented in detail the purpose of re-socialization of a person sentenced to punishment, as a news system, the purposes of punishment and revealed the title norm - re-socialization of the convicted person and its main methods fixed in the new draft penitentiary code. The draft of the criminal code of the RA disclosed the purpose of punishment, intended only for minors, providing natural physical, mental, spiritual, moral and social development of the convicted juvenile, his upbringing and protects against the negative influence of another person. The draft of the new criminal code of the RA provides some detailed features of the penalties provided for minors, concerning public works, imprisonment and short-term imprisonment. At the end of the work the author presents the findings on the effectiveness and value of criminal penalties.

Բանալի բառեր - *պատժի հասկացությունը, սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, իրավահ-պատակ վարքագծի խթանումը, սոցիալական բնականոն զարգացման ապահովումը, ազատության սահմանափակում, հանրային աշխատանքներ*
Ключевые слова: *понятие наказания, восстановление социальной справедливости, ре-социализация человека, приговоренного к наказанию*
Key words: *concept of punishment, the restoration of social justice, human re-socialization sentenced to punishment, promotion of law-abiding behavior, providing a natural social development, restriction of freedom, public works and so on*